ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Փետրվարի 15-16-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնեց Երուսաղեմ: Այցի առիթն էր Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանին Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանի հանձնումը, որը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով շնորհվել է նրան՝ պատրիարքական գահակալության 20-րդ, ծննդյան 91-րդ եւ քահանայագործության 70-րդ տարեդարձերի կապակցությամբ:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը եւ Տ. Գարեգին աբեղա Համբարձումյանն՝ իբրեւ գավազանակիր:

Փետրվարի 15-ին՝ առավոտյան 11.30-ին, ինքնաթիռը, որով մեկնում էր Հայրապետական շքախումբը, վայրէջք կատարեց Թել-Ավիվի միջազգային օդանավակայանում:

Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան արք. Մանուկյանը, պատրիարքության միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանյանը, ՀՀ-ում Իսրայելի արտակարգ եւ լիազոր դեսպան Շեմի Յուրը, Իսրայելում ՀՀ պատվո հյուպատոս Յոլակ Մոմջյանը, ինչպես նաեւ Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններ եւ Երուսաղեմի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Օդանավակայանից Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը առաջնորդվեց Երուսաղեմի «David Citadel» հյուրանոց:

Ժամը 14.00-ին շքախումբը ժամանեց հայկական թաղամաս՝ Սրբոց Հակոբյանց վանք, ուր Նորին Սրբությանը տեսնելու եւ օրհնությունը ստանալու համար հավաքվել էր Երուսաղեմում բնակվող հավատավոր հայորդիների հոծ բազմություն: Եկեղեցու մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Երուսաղենի հայոց պատրիարքության միաբանները, որից հետո հոգեւոր դասի ու Երուսաղեմի հայ համայնքի անդամների հետ Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մտավ եկեղեցի:

Հընթացս եկեղեցական արարողության Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքով դիմեց Երուսաղեմի հայոց պատրիարքության լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը:

Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ՀՐԱՇԱՓԱՌ»-Ի ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ձե՛րդ Սրբություն,

Դուք այսօր մեզի համար կըներկայացնեք ոչ միայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, այլ նաեւ Մայր Հայրենիքը, եւ այդ իրողությունը մեր սրտերը կըլեցնե մեծ հրճվանքով եւ ուրախությամբ, որովհետեւ Հայրենիքն ու Եկեղեցին արտասահմանի հայու համար միշտ եղած են ամբողջական հրաշք եւ ոգի, իսկ ատոնք ներկայացնողները՝ հրաշագործներ: Եւ այսօր այդ նույն հրաշքի լույսն է, որ կթրթռա ամենքիս հոգու մեջ: Այս առթիվ կփափագինք մեր սրտագգաց շնորհակալությունը հայտնել Ձերդ Վեհափառությանը, որ հանձն առիք Ձեր թանկագին ժամանակեն զոհել, ըլլալու Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներուն հետ, Ձեր ներկայությամբ պատվելու Սուրբ Աթոռույս Գահակալը, անոր՝ մոտ երեքքառորդդարյա անձնվեր եւ անխոնջ ծառայության համար, թե՛Հայաստանյաց Առաքելական Եկեղեցվո եւ թե՛մեր ազգային մշակույթին՝ ի մասնավորի երաժշտության եւ գրականության բնագավառներեն ներս:

Ձե՛րդ Սրբություն, եւս մեկ անգամ բարի գալուստ ասելով՝ կմաղթենք, որպեսզի Ձեր այս այցելությունը ըլլա բարի եւ ոգեշեն, ի պայծառություն եւ ի փառս մեր ժողովրդի եւ մեր Եկեղեցվո, ի մասնավորի՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Բարի եկաք եւ բարի կեցություն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՒ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՏԱՃԱՐՈՒՄ

Գոհաբանական աղոթքով ժամեր առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուղեւորվեցինք դեպի Սուրբ Քաղաք: Եվ ահա, Տիրոջ բարեհաճ ողորմությամբ նվիրական այս տաճարի աղոթաբույր կամարների ներքո Մենք աղոթքի ենք կանգնած Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության եւ բարեպաշտ մեր ժողովրդի զավակաց հետ՝ հայցելով, որ խաղաղության, անդորրության եւ բարեշինության մեջ ապրի տերունական սրբազան երկիրը: Մենք աղոթք ենք բարձրացնում Սրբոց Հակոբյանց վանքի այս նվիրական տաճարի սուրբ խորանի առջեւ հայրենի մեր երկրի եւ աստվածասեր մեր ժողովրդի աշխարհասփյուռ զավակների համար, որպեսզի Տերը Իր բարի հայացքի ներքո շարունակի պահել ու խնամել աստվածընտիր ազգս հայոց եւ որպեսզի հայրենի մեր երկիրն իր ժողովրդի ջանքերով շարունակի օրավուր շենանալ ու զորանալ:

Մենք գոհություն եւ փառք ենք մատուցում, որ պատմության ընթացքին Աստված միշտ ուղեկից է եղել մեր ժողովրդին, պահել ու պահպանել է բոլոր փորձությունների, հալածանքների ու տարագրության մեջ: Եւ այսօր, անկախությունը վերակերտած եւ խորհրդային

անասպվածության ծանր փարիներից ձերբազատված՝ շենանում ու պայծառանում են հայրենի մեր երկիրն ու Հայոց Եկեղեցին: Ահա այս բարի ավետիսով եկանք՝ Մեր օրհնությունը բերելու ձեզ՝ Երուսաղեմում ապրող մեր Եկեղեցու հավատավոր զավակներիդ, ու ձեզ հետ աղոթելու Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի, պատրիարք Սրբազան Հոր, միաբանության եւ բոլոր բարեպաշտ հավատացյալների համար, որ այսօր նախանձախնդրությամբ եւ նվիրումով ջանք ու եռանդ եք գործադրում՝ պահպանելու համար մեր ժողովրդի դարավոր նվիրական սրբությունները Երուսաղեմում:

Կրկնակի է Մեր ուրախությունը, քանզի այստեղ ենք Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանին իր գահակալության 20-րդ տարեդարձի առիթով ՀՀ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան հանձնելու կապակցությամբ, երբ նշվում է նաեւ շնորհազարդ պատրիարքի ծննդյան 91-րդ եւ քահանայագործության 70-րդ տարեդարձերը:

Խոսքն ավարտելով՝ Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Ամենապատիվ պատրիարքին, Սրբոց Հակոբյանց վանքի զինվորյալ միաբանությանը եւ ներկա բարեպաշտ հայորդիներին՝ մաղթելով քաջառողջ ու արեւշատ կյանք, գործոց հարանոր հաջողություններ եւ ամենայն բարիք:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո բոլոր ներկաները մոտեցան՝ համբուրելու Վեհափառ Հոր Օծյալ Աջը, հավարտ որի շքախումբը Նորին Սրբությանն ուղեկցեց պատրիարքարանի հանդիսությունների դահլիճ: Նորին Սրբությանը դիմավորեց Ամենապատիվ Թորգոմ պատրիարքը, որ առողջական տկարության պատճառով չէր կարողացել Վեհափառ Հայրապետին դիմավորել օդանավակայանում եւ մասնակցել հանդիսավոր թափորին:

Պատրիարքը ողջունեց Նորին Սրբությանը եւ որդիական երախտագիտությունը հայտնեց իր հանդեպ ցուցաբերած մեծ ուշադրության համար:

Այնուհետեւ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Ամենապատիվ պատրիարքին՝ Երուսաղեմի հայոց պատրիարքության շենացման ու բարեզարդման գործում ներդրած իր ազնիվ վաստակի համար՝ մաղթելով, որ Տերը միշտ զորակից լինի նրան՝ նվիրական իր առաքելությունը նույն ոգով շարունակելու համար:

Երեկոյան Սրբոց Հակոբյանց վանքի հանդիսությունների սրահում Նորին Սրբության գալստյան, ինչպես նաեւ Ամենապատիվ Տ. Թորգոմ պատրիարքի գահակալության տարեդարձի առթիվ տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին Հայաստանից եւ արտերկրից ժամանած թեմական եպիսկոպոսները, ՀՀ-ում Իսրայելի դեսպանն ու Իսրայելում ՀՀ պատվո հյուպատոսը, Լատին Պատրիարք Ամենապատիվ Տ. Ֆուաադ Տուալ արքեպիսկոպոսը, Ֆրանցիսկյանների մեծավոր Հալ Պիցաբելլան, Ասորիների առաջնորդ Մելքիմուրադը, Հույն եւ Ղպտի եկեղեցիներից բարձրաստիճան այլ հոգեւորականներ, ինչպես նաեւ՝ Սրբոց Հակոբյանց վանքի ողջ միաբանությունն ու հայ համայնքի ներկայացուցիչները:

Հանդիսության սկզբում ներկաներին ողջունեց Երուսաղեմի Պատրիարքության Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանյանը եւ

միաբանության անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության հանդեպ տածած հայրական ջերմ վերաբերմունքի համար:

Սրբազան Հոր խոսքին հաջորդեցին գեղարվեստական ելույթներ, որից հետո Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց բոլորին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Սիրելի՛ Ամենապատիվ պատրիարք,

Ամենապատի՛վ պատրիարք Տուալ,

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Անհուն ուրախություն է Մեզ համար վերստին գտնվելու Երուսաղեմում՝ տերունական այս սրբավայրում: Այսօր Հայաստանի եւ արտերկրի մեր եպիսկոպոսների ուղեկցությամբ եկել ենք Երուսաղեմ՝ մեր ուխտը նորոգելու եւ Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին հանձնելու Հայաստանի Հանրապետության «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» պատվո շքանշանը: Դարգելը շնորհվում է պատրիարքական գահակալության 20-րդ, ծննդյան 91-րդ եւ քահանայագործության 70-րդ տարեդարձերի կապակցությամբ՝ ի գնահատություն մեր ժողովրդին, Եկեղեցուն ու Հայրենիքին շնորհազարդ պատրիարքի մատուցած բազմամյա ծառայությունների եւ երախտարժան վաստակի:

Սիրելի՛ Ամենապատիվ պատրիարք, յոթ տասնամեակ առաջ խորին խոնարհումով Բարձրեալ Աստծուն անմնացորդ ծառայելու ուխտ կնքեցիք Սուրբ Խորանի առջեւ՝ ստանձնելով հայ եկեղեցականի պատասխանատու առաքելությունը: Հովվից մինչ առաջնորդ ու Երուսաղեմի Սուրբ Աթոռի պատրիարք անցած Ձեր ուղին Տիրոջ օրհնության ներքո լեցուն է եկեղեցաշեն ձեռքբերումներով ու հաջողություններով: Կյանքի ողջ ընթացքին Դուք ծառայություն եք մատուցել Հայրենիքից դուրս գրված եւ այլ երկրներում կյանք հաստատած Հայ Եկեղեցու զավակներին՝ Աստուծո Խոսքը մատուցելով նրանց հավատավոր հոգիներին:

Հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռիս միաբանության շնորհավորում ենք Ձեզ ՀՀ պետական բարձր պարգեւին արժանանալու առիթով: Թող Բարին Աստված պարգեւի Ձեզ արեւշատ ու արգասաբեր օրեր՝ ի պայծառություն Երուսաղեմի հայոց պատրիարքության եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրություն հավատավոր մեր ժողովրդի:

Նորին Սրբությունը գնահատանքի իր խոսքը բերեց նաեւ Սրբոց Հակոբյանց վանքի միաբաններին եւ հավատացյալ ժողովրդին՝ հորդորելով եռանդ ու ջանք չխնայել՝ ի նպաստ Երուսաղեմի հայոց սրբությունների պահպանության եւ ի շահ Սրբոց Հակոբյանց վանքի զորացման ու բարգավաճման:

Հիսունչորսի խանգարում վիրահատությունից

Տ. Թորգոմ արք. Մանուկյանի հետ

Այնուհետեւ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանն ընթերցեց Երուսաղեմի Հայոց պատրիարքին ՀՀ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրելու մասին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագիրը, որից հետո Նորին Սրբությունը պատրիարք Սրբազան Հորը հանձնեց շքանշանը:

Հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետն Ամենապատիվ Տեր Թորգոմ պատրիարքին նվիրեց հայոց այբուբենի փորագրությամբ եպիսկոպոսական պանակ: Երուսաղեմի հայոց պատրիարքության կողմից Նորին Սրբությանը հանձնվեց Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի, իսկ ՀՀ Նախագահին՝ Բեթղեհեմի Աստվածհայտնության տաճարի պատկերներով սաղաֆե քանդակներ:

Միջոցառման պաշտոնական մասին հաջորդեց հյուրասիրությունը:

Փետրվարի 16-ին՝ ժամը 12.00, Երուսաղեմի հայոց պատրիարքության հանդիսությունների դահլիճում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ ժողով գումարվեց՝ մասնակցությամբ Ամենապատիվ պատրիարքի, Նորին Սրբության հետ Երուսաղեմ ժամանած եպիսկոպոսների եւ Սրբոց Հակոբյանց միաբանության անդամների: Շուրջ երկու ժամ տեւած ժողովի ընթացքում քննարկվեցին Երուսաղեմի հայոց պատրիարքության կալվածների ամբողջական պահպանության, միաբանական ներքին կյանքին առնչվող եւ բազմաթիվ այլ հարցեր:

Նորին Սրբությունը ներկաներին հորդորեց ամենայն նախանձախնդրությամբ պահպանել Սուրբ Քաղաքի հայոց կալվածները, ինչպես նաեւ առաջարկեց առաջիկայի միաբանական ընդհանուր ժողով գումարել՝ քննարկելու պատրիարքության առջեւ ծառացած խնդիրները եւ համախոհուրդ լուծելու դրանք:

Հավարտ ժողովի Սրբոց Հակոբյանց միաբանական սեղանատանը ի պատիվ Նորին Սրբության մատուցվեց ողջերթի ճաշ:

Ճաշից հետո Նորին Սրբությանը ուղեկցեցին միաբանության Կյուլպենկյան՝ վերանորոգված եւ նոր գրապահոցներով համալրված գրադարան, որտեղ Վեհափառ Հայրապետն իր տպավորությունները գրանցեց գրադարանի հուշագրքի առաջին էջում:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը այցելեց Սուրբ Հարության տաճար՝ առ Աստված իր ուխտը նորոգելու եւ խոնարհումը բերելու Տերունական սուրբ վայրերին:

Երեկոյան Նորին Սրբությունը հրաժեշտ տվեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներին, եւ շքախումբն ուղեւորվեց Թել-Ավիվի օդանավակայան, որտեղից Հայաստան հասավ փետրվարի 16-ի գիշերը:

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՔԵՂԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ